

ՅԱՆՈՒՆ ՕՐԷՆՔԻ

(Ս. Ֆուգից)

Ապրում էր նաչար մի խեղճ այրի կին
Իր երկու մանուկ զաւակների հետ,
Մի օրավար հող նորա ամուսին
Թողել էր միայն իր մահուանից յետ։

Դարնան՝ երբ այրին սկսեց վար ու ցանք,
Տանու քահանան եկաւ ու ասաց.
— «Էջը հորթի հետ լծելն է յանցանք,
Լուծիր, օրէնքով է այդ արգելուած։»

Դաշտը մշակուած, հերկուած էր արդէն
Եւ դնաց այրին սերմը ցանելու.
Նորից խրատով եկաւ քահանէն՝
— «Ձգուշացիր, կին, կօրեկ խառնելու։

Մինչդեռ մօտ էին հունձի օրերը
Կրկին երևաց, ասաց քահանան.
— «Անհունձ պիտ թողնես արտի կողերը
Այս է օրէնքի արդար հրաման։»

Յօրենք յարգից զատելու ժամին
Եկաւ քահանան զոյգ տոպրակ ձեռքին՝
— «Աստծոյ տուրքը դէ չափիր, ով կին —
Իսկ տասանորդը Նորա ծառային։»

Չէ, ապրել այսպէս էլ ես չեմ կարող.
 Եւ այրին վճռեց վաճառքի հանել
 Հողի կտորը և նորա փողով
 Շուտափոյթ մի զոյգ գառնուկներ գնել:

Եւ գառնուկները շուտ մաքի դարձան,
 Բայց երբ խուզելու օրը մօտեցաւ,
 Յայտնուեց քուրմը, ասաց պահանջով՝
 —Առաջին բուրթը իմն է օրէնքով:

Երբ արժանացան նորածին գառան
 —«Պէտք է սրբութեամբ պահես օրէնքը»—
 Նկատեց այրուն Աստուծոյ ծառան,
 —«Կամ անդրանիկը, կամ տո՛ւր փրկանքը»:

—«Ո՛վ արդարադատ, գլխաւատ Աստուած,
 Այժմ ինչ անեմ, լալիս էր այրին.
 Արդեօք չմոլթեմ սորանց նոր ծնուած
 Գոնէ քիչ ապրուստ լինի որբերին»:

—«Հէրին, գլուխը ու փորոտիքը
 Հաճեցէք տալ ինձ, ասաց նա կրկին,
 Այդպէս է հնուց դրուած օրէնքը...
 —Հեռացիր անգութ... հըծծում էր այրին...

«Քեզ եմ այս օրից նուիրում միայն
 Իմ վերջին լուման, Քեզ ով Արարիչ,
 —Եթէ այդպէս է, գոչեց քահանան,
 Այժմ ամենը պիտի տաս դու ինձ»:

—Քեզ... ինչո՞ւ, օ՛րբում,
 Միթէ՞ չես լսում,
 Որ նուիրում եմ ամենն Աստըծուն.

—«Ե՛ւ ամենը այն, որ Աստըծունն է
Պիտի իմանաս, ի՞նչ է, իմ քոյր...»

Եւ հրեշտակները գլխակոր տրտում
Հաց ու աղօթքով այրուն են դիտում,
Նորա արցունքին ձայնակից լինում:
Եւ լոյս ամպերից լսում է մի ձայն
Որը կարդում է խիստ դատավճիռ՝
«Վա՛յ ձեզ, ó քուրմեր, կոյր ու անարժան,
Որ արդարութեան պղծում էք կշիռ.
Եւ մօտ է օրը մեծ դատաստանին,
Երբ պիտի մատնուիք յաւերժ գեհենին»:

Թարգմ. ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ